


8980

891 99
—
5-58

1906

891.542-3
36-58



3411

ՅԱՐԱԿԱԹԻԿՆ ԵՍՍ.ՑԵՍԱՆ

891.542-3-

35-58

ՄԻԵՒՆՈՅՆ 



ԴԱԳԱՂՈՒՄ...



~~~~~


ԹԻՖԼԻԶ

Էլեկտրոսահմարան Հայոց Հանրապետութիւն. Մաղաք. Փող., 15.  
1906. (152)

Հ. 2003

2230

Дозволено цензурою, 18 октября 1905 года. г. Петербургъ.



## ՄԻԵՒՆՈՅՆ ԴԱԳԱՂՈՒՄ...



Ամպամած մուայլ օր էր  
կանգնած լքեալ Բ . . . քա-  
ղաքի վրայ, որը դեռ ուշըի  
չէր եկել և սպում էր լուս ու  
մուսչ: Միքանի օր առաջ թափ-  
ված անմեղ մարդկանց յոր-  
դահոս արեան հետքը դեռ չէր  
ոչնչացել երկրի վրայից. ա-  
մեն ինչ անխատիր կլանող հըս-  
կայ ծովը հրէշային իրակա-  
նութիւնից յուզգած շարունա-  
կում էր փոթորկվել. ալիքնե-

րը լեզու առած՝ մրմնջում էին—եղբայրառապանութիւն...

Եղանակը բաւական ցուրտ էր: Քաշպարում կենդանութեան նշոյլ չէր նկատվում. կարծես, նրա բնակիչները իսպառ չնջվել էին շէյթանի սարքած մահաբեր դաւադրութիւնից:

Հեռվում երեսում էին ահաբեկված Բաւախանին ու Սև քաղաքը, որոնք, կարծես, աւելի էին սեացել. բայց ոչ թէ սովորական ծխից ու մազութից, այլ ստորաքարշ սատանայի ու սրից սարսափած... Այլև չէ լսվում ամեհի մեքենաների խլացուցիչ գոռացն ու աղմուկը. անդորրութիւն և խորհրդաւոր լսութիւն է տիրում...

Սակայն Բ. քաղաքի գերեզմանոցում աւելի մեծ շարժում կայ. այնտեղ մի կողմում կուտակված են նահատակների դիակները, որոնք այլանդակված և կարծես վայրենի գաղաններից յօշոտված, այստեղ-այնտեղ թափթափված են իրար վրայ, ինչպէս ապրանքի. կոյտեր... Նրանց մէջ կան զա-



...մի կողմում մեռուտակված են նահատակների գլխիները.

ուամեալ ծերունիներ, նորափթիթ կոյս աղ-  
ջիկներ, գեռահաս, առոյգ երիտասարդներ,  
չարքաշ մայրեր, սրախողիսող մանկիկներ,  
որոնց անմեղ, մեռելային դէմքերը դէպի  
երկինք դարձած՝ նախատում էին նախախ-  
նամութեան անտարբերութիւնը...

Հէքիաթական աշխարհի մի կենդանի  
պատկեր էր այդ տեսարանը:

Որգեկորյոյս մայրն իր մինուճար զա-  
ւակին էր վինտրում լալագին, արագօրէն  
դիակները պտրտելով. ջահէլ կինը իր սի-  
րած նորապսակ ամուսնուն էր որոնում,  
խելագարի նման շարժումներ գործելով.  
Փոքրիկ մանուկները «հայրիկ ջան, մայրիկ  
ջան» ողբալով, կանչում էին իրանց ծնող-  
ներին...

—Թրխիկ, թրխիկ... լսվում էր գերեզ-  
մանատան մէջ գերեզմանափորների բրիչ-  
ների ձայնը: Նրանք անընդհատ փորում  
էին ու փորում, սառն հողի մէջ ամփոփելու  
հարիւրաւոր վաղամեսիկ ննջեցեալներին,  
որոնք այս տանջալից ու թունաւոր աշ-

խարհից գնում էին հանգստանալու յաւի-  
տենական անվրդով հանգստութեան գրկում,  
որին անկարող է դիպչել երկրային դա-  
ժան արարածների սուրբն ու խարդախ սա-  
տանայակերպի աւերիչ շունչը...

Եւ հին գերեզմանները, կարծես, 22ըն-  
ջում էին նորաթաղների ականջներին ան-  
լսելի ձայնով.

—Եկէք, ով եղբայրներ, եկէք, հանդու-  
տացէք մեզ մօտ. այստեղ լսն է, խաղաղ  
ու ապահով. այստեղ յաւիտենական հանգս-  
տի ու համեղբայրութեան աներևոյթ թա-  
գաւորը սիրով կը հովանաւորէ երկրի վրայ  
ճնշվող ու կեանքը քարշ տուող մարդկանց.  
այստեղ չը կան նենդաւոր դաւադիրներ,  
մարդկային խտրութիւն, չարաշունչ ազգա-  
տեցութիւն: Եկէք, մենք ամենքս էլ այստեղ  
հաւասար եղբայրներ ենք...

—Թրխիկ, թրխիկ... աղմկում էր գետի-  
նը, որին ձայնակցում էր թաղման մեղե-  
դին...

\* \*

Գերեզմանատան մի անկիւնում, որտեղ թաղվում էին մեծ մասամբ աղքատ դասակարգի մարդիկ և մշակ օտարականակը, երկու հոգի շտապով փորում էին գերեզմաններ: Նրանցից մէկը միջին տարիների այր էր, միւսը ծերութեան շրջանը մըտած մօտ 58 տարեկան մարդ: Երկուսի էլ հագուստներից հեշտ էր եղակացնել, որ նըրանք տաճկահայ դաղթականներ էին: Վերջինիս ցնցոտիները, կարկատած չուստերը և վատառողջ կազմուածքը ցոյց էին տալիս նրա դառն աղքատութեան մէջ գտնվելը. նըրա սփրթնած ճակատն իր խոշոր կնճիւներով, արևալա ու պարանոցը, անխնամ կերպով աճած երկար բեղերն ու միրուքը լըռելեայն վկայում էին, որ կեանքի հուժկու հոսանքում խեղճ ծերունին բազմաթիւ փոթորիկների է ենթարկվել:

—Մաթոս ամի, քանի տարի է Ռու-

սաստանում լինելոց, հարցը նրան միւս գերեզմանափորը, մի փոքր հանգստանալով և մաքրելով ճակատի աննշան քրտինքը:

—Էհ, Մրտօ, Բնչ ասեմ. մեծ կոտորածից յետոյ փախայ իմ մինումար որդուս հետ և եկայ այստեղ. կինս յղի էր այն ժամանակ, իսկ հիմա ծնված որդիս 9-10 տարեկան կը լինի. արդեօք կարժանանամ տեսնել նրան, կարօտեալ կնոջս, հայրենիքս, խօսեց ծերունին վշտաբեկ ձայնով.—և այդ միջոցին երկու խոշոր արցունքներ գլորվեցին նրա մազոտ այտերի վրայով:

—Էհ, ամի, ես էլ ունեմ վաթանում կին, երկու երեխայ, պառաւ մայր. ես էլ այստեղ կարօտի մէջ խաշվում եմ, վրայ բերեց Մրտօն:

Քաղցը յիշողութիւնները բուան հոսանքով վերակենդանացան պանդուխտ սրտերում. նրանք լուցին և մտքում խօսելով այդ յիշողութիւնների հետ, շարունակեցին փորել:

—Թրխկ, թրխկ, ամեն կողմում փորում էին հողը:

—Թիւրքիայի կոտորածից փախանք,  
բայց այստեղ, այստեղ աւելի վատթար կո-  
տորածի ենթարկվեցինք, շարունակեց ծերը:  
Թիֆլիսից նոր էինք եկել Բ... գործ փընտ-  
րելու. Մինաս որդիս մի գործարանում ըն-  
դունվեց ութ բուրլի ամսականով, իսկ ինձ  
ընդունեցին, առարկելով, որ պառաւել եմ,  
անպէտք եմ: Աղէտի ժամանակ և մինչև  
այժմ չը կայ իմ անուշիկ բալէս, չը գիտեմ,  
ուր է նա. ախ, Տէրը մի արասցէ, նրան  
փորձանք պատճած լինի:

Նրա ճակատն աւելի կնճռոտվեց. դէմ-  
քը մայլվեց. արցունքները նորէն դուրս  
ցայտեցին նրա խոր ընկած աչքերից:

—Քանի՞ տարեկան է Մինասդ, հարց-  
րեց Մրտօն:

—Զէնէլ-ջիւան է նա, 25 տարեկան,  
առողջ, սիրուն տղայ. այսուհետեւ նա պէտք  
է լինի մեր օջախի նեցուկը, ես այլևս չեմ  
կարող աշխատել, վաղաժամ ծերացել եմ,  
ոտու գերեզմանումն է: Ա՛խ, ինչ լաւ կը լի-  
նէր, որ հէնց այս իմ փորած գերեզմանին

մէջ թաղվէի իմ Մինասի ձեռքով և բոլոր  
հայ գաղթականների վիշտն ու ցաւը հետո  
ընդմիշտ տանէի...

—Մաթոս ամի, ամենքս էլ մեռնելու  
ենք. այդպէս մի ասիլ, Աստուած կը բար-  
կանայ:

—Աստուած, մի՞թէ կայ Աստուած.  
եթէ կայ, հապա ինչո՞ւ է թոյլ տալիս, որ  
անզէն, անպաշտպան հային ամեն տեղ հա-  
լածեն, տանջեն ու կոտորեն, ինչպէս ան-  
մեղ ոչխարի: Չէ, Աստուած չը կայ. այս  
լուսաւոր, քրիստոնեայ երկրի մէջ կա-  
տարված այսչափ սրածութիւնը ինձ բոլո-  
րովին յուսահատեցրեց Աստուածոյ դէմ, ա-  
սաց Մաթոս ամին միքանի խոր հոգւոցներ  
հանելով, և կրկին շարունակեց փորելը:

—Աստուած ի՞նչ անէ, ամի, քանի  
որ մարդիկ այնքան են ամբարտաւանացել,  
կորցրել խիզճ ու արդարութիւն, որ Աս-  
տուած անզօր է նրանց հախից գալ: Բայց  
հաւատացած եղիր, որ վերջ ի գերջոյ  
բազմաչարչար ու վայթանազուրկ հայ ժո-

Դովլրդի տանջանքին վերջ կը դնէ և կը  
տայ նրան իր կորցրած նուիրական վա-  
թանը, հողն ու ջուրը, կը ծագեցնէ նրա  
գլխին խաղաղութեան ու երջանկութեան  
կինսաբեր արեւ... ասաց Մրտօն խորհրդա-  
ւոր եղանակով:

—Ա՞խ, ուր է, ուր է, իհարկէ ես  
չեմ արժանանալ այդ օրին, թող գոնէ իմ  
ազիգ Մինասն ու որդիքը տեսնեն այդ եր-  
ջանիկ օրը, և թող ամեն մի ձնշված մար-  
դու գլխին ծագէ այդ արեւ, հրճուանքով  
գոչեց ամին, ձեռները դէպի երկինք պար-  
գելով:

Նոյն րօպէին նրանից մի փոքր հեռու  
բերեցին ու հողին յանձնեցին մի երիտա-  
սարդ հայի:

—Խեղճ ջիւան արև, ցաւակցեց Մա-  
թոս ամին, միթէ այդչափ մեծ յանցաւոր  
էիր հայ լինելովդ, որ ծաղիկ կեանքիդ թե-  
ւը կտրել տւեցին... Եարաբ հայրդ գիտէ  
քո մահը և երբ, իմանայ, կարսղ է կենդա-  
նի մնալ: Ա՞խ թէ ինձ կը տային արիւնար-



Անոեկային դէմիթր դէպին երկինք զարձած՝ նախառամ էին նախախմա-  
ւոր բնան ամսարեւորինը...

բու մարդկանց գատաստանը, ես նրանց պատառ-պատառ կանէի և կը զցէի գաղանների առաջ, ատամները կրծտացրեց նա և բրիչով այնպիսի մի ուժեղ հարուած իջեցրեց հողին, որ կարծես նրա աչքերին երկեցան այդ մարդիշէները:

—Համբերութիւն, Մաթոս ամի, կը գայ ժամանակ, երբ սատանայակերպների տեղը կը բռնեն հրեշտակները...

Դագաղակիր մարդկանցից մէկը նման թուաց իր Մինասին. բայց երբ նա մօտից անցաւ, ծերունին զգաց իր խարված լինելը, և նորից իջնելով փոսի մէջ, սկսեց հողը դուրս տալ:

—Գուցէ փախել, ազատվել է քո Մինասը, ամի, հանգիստ եղիր, շատ մի վըրդովուիր, աշխատեց միսիթարել Մրտօն:

—Ի՞նչ, ի՞նչ, փախել է, ոչ, դու նրան չես ճանաչում, նա վախկոտ հայ չէ. նա առիւծի սիրտ ու քաջութիւն ունի: Աղէտի միջոցին նա ձեռքերը ծալած, նստած չէր լինի... բայց երանի անմսաս լինի մնացած:

Նրանք լոեցին և շարունակեցին գործը: Զգալի կերպով նկատելի էր, որ ծեր գերեզմանափորը հետքինեաէ ուժասպառ էր լինում: Նրա թևերի ջլերը կանգ էին առնում:

—Մաթոս ամի, գուրս արի փոսից, մեռելը բերեցին, ձայն տուեց Մրտօն:

Ծերունին նրա օգնութեամբ դուրս եկաւ փոսից: Ննջեցեալն արդէն զրած էր գերեզմանի շրթունքին: Պանդուխտ գաղաղակիրները, թւով ինն հոգի, տեսնելով Մաթոս ամուն, խորհրդաւոր հայացքներ ու շըշընջոցներ փոխանակեցին իրար մէջ: Քահանան չափազանց շատակ կարդում էր ծիսկատարութիւնը:

—Ո՞վ է ննջեալը, հետաքրքրութեամբ հարցուց Մաթոս ամին:

Ոչ ոք չը պատասխանեց. բոլորն էլ արձանացած մնացին:

Խեղճ մարդը մի վատ զգացմունքով լցված վրայ ընկաւ, բացեց դագաղը:

—Մինասը, իմ բարէն... յանկարծա-

կան մի ճիչ արձակեց և ընկնելով դիմակի  
վրայ, մնաց անշնչացած դրութեան մէջ...

Մեռեալը նրա որդին էր...

Փոքը ինչ յետոյ՝ նոր փորած գերեզ-  
մանի մէջ ամփոփեցին նրա և իր որդու դի-  
ակները, բարձրացրին մի անշուք հողա-  
թումբ, որը լուս, սակայն պերճախօս, բար-  
բառով գնաց կրկին անգամ բաղխելու ան-  
տարբեր յաւիտենականութեան դոները և  
աշխարհի հազարաւոր տառապեալների հե-  
ծեծանքները հասցնելու յաւիտենական մեծ  
դատաւորի ականջին...

Գերեզմանոցում աղմուկը հետզհետէ  
մեծանում էր. լսվում էին շարունակ սգա-  
ցողների հեծկլատանքներն ու վայնասունը,  
որոնց արձագանք էր տալիս գերեզմանա-  
փորի միապաղադ փորելու ձայնը.

—Թրիկ, թրիկ...



8980

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0333344

